

Եղիշէ Ս. Պատրիարք իր գահակալութեան առաջին օրէն ուշադրութիւն դարձուցած է ժառ. Վարժ.ի բարեկարգութեան և յառաջդիմութեան. իր օրով հաստատուած են կիւղ-սիկնիկեան և Մեղրոնեան սանուց Ընծայարանի երկու դասարաններն, որոնց՝ ինչպէս նաև Ժառանգաւորացի՝ անձամբ կը դասախօսէ: Առաջին անգամ ըլլալով որոշմամբ Տն. Ժողովոյ կարգադրած է որ 1928—1930 չըջտեան համար՝ նոր ձեռնադրուած երկու արեւդաները Անգլիա երթան ուսանելու և ապա զան դասախօսելու Ընծայարանին մէջ: Դարձեալ որոշմամբ նոյն ժողովոյ հրամայած է վերսկսիլ Սիրոն ամսագրին հրատարակութիւնը, որուն՝ ինքն ալ կ'աշխատակցի բանասիրական, կրօնական և այլ յօդուածներով: Ընծայացուաց և միաբանութեան զարգացման համար այժմ դարակներու մէջ ամբարած է հապարաւոր հատորներ որ քիչ ժամանակէն պիտի գետեղուին իր Յոթեկեանին առթիւ նոր շինուելիք Մատենադարանին մէջ:

Եղիշէ Ս. Պատրիարք ունի նաև հրատարակութիւններ, որք են. Բառագիտարիւն (տպ. 1886), Ընթացի գրոց բարբառ, Ա. Տարի (1880) Բ. Տարի (1883). Ընթիր առացումով (1882): Պատմութիւն Հայ Մատենագրութեան (1885), Հոփուական Սրինգ (տպ. Իգմիր, 1909) Դրոռագներ Մանուկ Յիսուսի Կեանքի (1926), Այբուբենի Հայերէն Բառարարութեան (1928). ունի ուրիշ անտիպ երկասիրութիւններ որոնք հետզհետէ պիտի հրատարակուին:

Եղիշէ Ս. Պատրիարք բացի գրական ու կրթական գործունէութենէն, խնամք ունեցած է Ս. Յակոբի վանքին կալուածներուն նորոգութիւնները կատարել տալու. մանաւանդ որ վերջին 1927 Յուլիս 11ի երկրաշարժէն առաւել կամ նուազ չափով վնասուած էին. այսպէս վերջին ժամանակներն նորոգուած են Ս. Յակոբի վանքին վնասուած մասերը. ի հիմանէ կառուցուեցաւ նաև Աղգ. Նախարարարանի և Մանկապարտէզի շէնքը, որ երկրաշարժէն վտանգաւոր կերպով քայքայուած էր. հետզհետէ կը նորոգուին Բեթղեհէմի, Ռամլէի, Յոպպէի վանքերը ու կալուածները. Ս. Յակոբի վանքի թիմերուն կրթական գործերուն հոգատարութիւնը կատարելով հանդերձ, Հայֆայի մէջ եկեղեցիի և վարժարանի համար գետին մը գնուած է. պատեն ժամանակին շինութեան սկսելու համար. Վահագնի (Յորութիւն պարք.ի կալուածը) վրայ երկու յարկ և մէկ թև ևս ա-